Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ << ՀՀ Արարատի մարզի Նոր կյանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ – ի << Տեխնոլոգիա>> առարկայից՝ 4 դասաժամ, <<Մաթեմատիկա>> առարկայից՝ 21 դասաժամ, <<Կերպարվեստ >>առարկայից՝ 2 դասաժամ , << Երաժշտություն >> առարկայից՝ 2 դասաժամ, << Պատմություն>> առարկայից՝ 18 դասաժամ , <<Կենսաբանություն>> առարկայից՝16 դասաժամ,<<Շախմատ>> առարկայից՝ 4 դասաժամ<<Ֆիզիկա>> առարկայից՝ 9 դասաժամ, <<Հայոց լեզու և գրականություն>> 12 դասաժամ ,<<Ֆիզկուլտուրա>> առարկայից՝ 2 դասաժամ,դասվար՝ 16 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) "Հանրակրթության մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկիպատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելուիրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորականգրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնումէ մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2025թ.-ի սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-15^{00},

բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա կունենա 2025թ. -ի սեպտեմբերի 23-ին՝ ժամը14^{00} - ին, ՀՀ Արարատի մարզի Նոր կյանքի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝գ.Նոր կյանք, Չարենցի 7, հեռախոս՝ 094-00-87-87: